ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
25.02.2025թ. կնքված N ԵՔ-ԳՀԾՁԲ-25/60 գնման պայմանագրի

ք. Երևան «21» «03» 2025թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զ. Մուրադյանի, մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.02.2025թ. կնքված N ԵՔ-ԳՀԾՁԲ-25/60 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը և Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել մինչև **10000000 (տաս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.3 Պայմանագրի թիվ 1, թիվ 2 հավելվածներում նշված՝ 60181100/544 ԳՄԱ կոդի փոխարեն հիմք ընդունել 60181100/501 ԳՄԱ կոդը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՄՈՒՐԱԴՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ » ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Սևան, Նալբանդյան փ. 40տ., 5 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ջեյթուն մ/ճ |
| Հ/Հ 900052000230 | Հ/Հ 220300126657000 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08623502 |
| Վ. Պապիկյան ---------------- | Զ. Մուրադյան ---------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված թիվ 1
25.02.2025թ. կնքված N ԵՔ-ԳՀԾՁԲ-25/60 գնման պայմանագրի
« 21 » « 03 » 2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 60181100/501 | Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի հրատապ լուծում պահանջող ընթացիկ ծառայություններ | - | - | 3900000 | 7800000 | 7800000 | 7800000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 | 10000000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900052000230
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ---------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՄՈՒՐԱԴՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Սևան, Նալբանդյան փ. 40ա., 5
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ջեյթուն մ/ճ
Հ/Հ 220300126657000
ՀՎՀՀ 08623502

Զ. Մուրադյան ---------------
(ստորագրություն)
Կ.Տ.